## ԱԾԱԿԱՆԸ ԵՎ ԹՎԱԿԱՆԸ ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ» ԵՐԿՈՒՄ

Ինչպես արդի հայերենում, այնպես էլ գրաբարում ածականն ունի համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական և գերադրական: Դրականը ածականի ուղիղ ձևն է, այն ցույց է տալիս առարկայի հատկանիշ՝ առանց համեմատելու այլ առարկաների հատկանիշների հետ, օրինակ՝ մեծ, գեղեցիկ, հրաշալի, բարձր և այլն: Բաղդատական աստիճանը ցույց է տալիս համեմատելի հատկանիշ, տվյալ հատկանիշի ավելի կամ պակաս լինելը մեկ այլ առարկայի հատկանիշից: Գրաբարում բաղդատական աստիճանը կազմվում է -գոյն վերջածանցով կամ նկարագրական եղանակով: Հզօրագոյն, լաւագոյն, մեծագոյն բառերը գրաբարում նշանակել են ավելի հզոր, ավելի լավ, ավելի մեծ:

Ժամանակակից հայերենում այս ածանցով կազմվում է գերադրական աստիճանը: Երբեմն գրաբարով ավանդված գրականության մեջ հանդիպում է նաև այդպիսի գործածություն:[1] Բաղդատականի կազմության այս ձևը Կաղանկատվացու երկում հստակորեն չի գիտակցվում: «Աղվանից պատմության» մեջ ածականի համեմատության աստիճանները կազմում են մի խայտաբղետ տեսարան: -Գոյն ածանցով և՛ բաղդատական աստիճանն է կազմվել, և՛ գերադրական, ընդ որում՝ ավելի շատ գերադրական:

Հետևյալ օրինակներում -գոյն ածանցը բաղդատական աստիճան է կազմել՝

«Մեծագոյն խաչ տուք հարկանել ի տեղիդ» (էջ 76): «Եւ կրկին և երեքկին տուեալ սաստկագոյն պատերազմ» (էջ 109): «Հաւատարմագոյն լիցի յաչս նոցա երթն իմ» (էջ 159): «Առ ի մեծարգոութենէ ինչ կրտսերագունից շնորհեցաւ» (էջ 197): «Զլոյս առ խաւար ծաներու՛ք խորագոյնս քննելով» (էջ 278): «Գեղեցկագոյն իմն լուսեղէն խաչս մի զմիոյ զկնի ի վերուստ ի վայր տողեալ» (էջ 255): «Քսան կանգուն հեռագոյն ի Յարութենէն» (էջ 283): «Խստագոյն նեղութիւն ի Հռովմայեցւոցն հասեալ նմա հանդիպիւր» (էջ 211):

Հետևյալ երկու օրինակներում բաղդատականի իմաստն ընդգծվում է ևս բառի միջոցով: Գրաբարում հազվադեպ այդ բառով կազմվել է բաղդատական աստիճանը:[2]

---

[1] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 59:
[2] Տե՛ս Ս.Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հատոր Ա, Երևան, 1961, էջ 236:

«Զնոյն եպիսկոպոսն դժնդակագոյն ևս հարկանել հրամայէր» (էջ 77): «Նոյնգունակ և առաւելագոյն ևս հիացուցանող պայծառութեամբ զճանապարհն յօրինեաց» (էջ 83):

Բաղդատականը կարող է կազմվել ածանցի և նկարագրական եղանակի օգնությամբ միաժամանակ[3]: Այդպիսի օրինակներ կան նաև Կաղանկատվացու երկում՝ «Եւ ահ անկաւ ինձ մեծ և ահագին և բարձրագոյն քան զերկինս երկնից և խորագոյնս քան զներքին կիսագունդն» (էջ 18): «Ընդ արուսեկին կշռեցից զքեզ՝ դու պայծառագոյն քան զարուսեակդ նշոյլս արձակես» (էջ 24): «Լաւ լիցի յառաջագոյն քան զերէցն մեռանել ինձ» (էջ 40): «Քան զբոլոր աշխարհս բարձրագոյն գտար» (էջ 27): Նաև՝ մանկագոյն քան զնոսա (էջ 72), իմաստնագոյն քան զքեզ (էջ 158), յառաջագոյն քան զինքն (էջ 167), պատուականագոյնք քան զայդոսիկ (էջ 312), յառաջագոյն քան զմեզ (էջ 270):

Ունենք օրինակ, որտեղ հեղինակը -գոյն ածանցը գործածել է առաւել բառի հետ: «Արդարև զգայուն են և առաւել իմաստագոյն հոգիք հրաժարելոցն ի մարմնոյ» (էջ 88):

Այս օրինակը ցույց է տալիս, որ Կաղանկատվացու երկում -գոյն ածանցի բաղդատական իմաստը հստակորեն չի գիտակցվում, այդ պատճառով էլ գործածել է առաւել բառը:

Նկարագրական եղանակը երկում քիչ է գործածված:

Գրաբարում գերադրական աստիճանը կազմվում է կարի, յոյժ, սաստիկ և նման բառերի միջոցով:

Կաղանկատվացու մոտ հանդիպում ենք կարի իսկ նուազք, կարի յոյժ դժկամակ, յոյժ առաքինի, կարի իմն ախորժելի և նման արտահայտությունների: Ինչպես տեսնում ենք, գերադրականի իմաստն արտահայտվել է նաև երկու այդպիսի բառի միջոցով:

Այնուամենայնիվ, հեղինակը գերադրականի իմաստն արտահայտելու համար հաճախ օգտագործել է -գոյն ածանցը:

Բերենք որոշ օրինակներ՝ մանկագոյն ի նոցանէ (էջ 53), լցեալ պայծառագոյն լուսով (էջ 59), անուշագոյն խնկովք (էջ 63), մեծագոյնս պարփակեալ (էջ 121), ի լաւագոյն առնէ (էջ 263), ի պատուականագոյն ականց (էջ 61), ի մաքրագոյն յարկեղս (էջ 122):

Հանդիպում են դեպքեր, երբ գերադրական աստիճանը արտահայտված է -գոյն +յոյժ կամ յոյժ+-գոյն կաղապարով:

Այսպես՝ ահավորագոյն յոյժ (էջ 59), յոյժ ջերմագոյն (էջ 609), յոյժ յորդագոյն (էջ 73), յոյժ ահաւորագոյն (էջ 72,76):

---

[3] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 60:

Այսպիսով, որքան էլ բազմազան և խառը պատկեր ներկայացնեն այս օրինակները, Կաղանկատվացու երկում կա մի միտում՝ -գոյն ածանցը դարձել է գերադրականի ցուցիչ:

Կան ամենա- նախածանցով կազմված ածականներ՝ ամենավեյելուչ (էջ 40), ամենապարկեշտ (էջ 49), ամենաչար (էջ 56), ամենասուրբ (էջ 60), ամենապայծառ (էջ 177), ամենաբարեպաշտ (էջ 181), ամենանուաստ (էջ 201):

Քանի որ Կաղանկատվացին հետդասական շրջանի հեղինակ է, ապա նրա ստեղծագործության մեջ արդեն ամենա- ածանցը դրվել է ոչ միայն բայարմատի, այլև ածականի վրա:[4]

Ինչպես հայտնի է, ածականները գոյականների հետ գործածվում են և՝ նախադաս, և՝ ետադաս: Գործածության երկու ձևերն էլ առկա են Կաղանկատվացու մոտ: Նախադաս բազմավանկ ածականները չեն հոլովվում՝ չարամահ տանջանօք (էջ 261), բարեսէր մտօք (էջ 280), բարձրաբերձ կոհակօք (էջ 9), սակայն հանդիպում է և հակառակը՝ մեծամեծօք նախարարօք (էջ 19, 59), երանելեաւն Տրդատաւ (էջ 14), երանելւոյն Գրիգորիոսի (էջ 33), զերանելւոյն Պանդալիոնի (էջ 39), երանելւոյն Յոբայ (էջ 75):

Այս բառը հանդիպում է նաև չհոլովված ձևով՝ երանելի նահատակացն (էջ 33):

Այլ բազմավանկ ածականներ ևս հանդիպում են՝ յամենողորմէն Աստծոյ (էջ 120), օտարազգւոյ թշնամւոյն (էջ 173), առաքինւոյն Պետրոսի (էջ 274), մարդասիրին Աստուծոյ (էջ 237), չարափառին Ներսիսի (էջ 303), աշխարհականաց զինուորաց (էջ 310):

Գտնում ենք անհամաձայնության հետևյալ դեպքը՝ մեծագնի մարգարտով (էջ 129), մեծագնի իւղովք (էջ 85):

Նախադաս միավանկ ածականը կարող է հոլովվել՝ սրբոյ քաղաքին (էջ 280), մեծաւ փութով (էջ 281), քաջիւն Վաչէիւ (էջ 40), պղծոյն Պետրոսի (էջ 123) և այլն:

Սակայն հոգնակի թվի գործիականում ածականը երբեմն թվով չի համաձայնվում գոյականի հետ, մնում է եզակի, այսպես՝ մեծաւ նզովիւք (էջ 140), մեծաւ փափագանօք (էջ 80, 149), մեծաւ աղաչանօք (էջ 236, 238):

Միավանկ ածականը Կաղանկատվացու երկում երբեմն նախադաս դիրքում չի հոլովվում՝

մեծ լերամբ (էջ 95), մեծ կայսերբն (էջ 14), սուրբ վարուք (էջ 15), չար պաշտամանն (էջ 54):

---

[4] Տե՛ս Հր.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.I, էջ 108:

Ետադաս դիրքում գտնում ենք անհամաձայնության մեկ դեպք՝ գետովն մեծ (էջ 139):

Հայտնի է, որ հոդ կրում է նախադաս անդամը, անկախ այն բանից՝ գոյական է, թե ածական: Մեր ուսումնասիրության մեջ ունենք օրինակներ, որտեղ հոդը դրված է և՝ ածականի, և՝ գոյականի վրա, օրինակ՝ զծանրատաղտուկ զլուծն (էջ 19), յամենազօրէն յԱստուծոյ (էջ 59), զմարտիրոսական զպսակ (էջ 96):

Այժմ անդրադառնանք երկում թվականների գործածությանը:

Երկում հանդիպում են թվականների գրության զուգահեռ ձևեր, կան ինչպես բառերով, այնպես էլ այբուբենի տառերով կազմված թվականներ՝ երրորդ (էջ 346), վաթսուներորդ երկրորդ (էջ 237), ութսուն հազար (էջ 319), ԿԵ, ԺԹ, ԺԵ (էջ 290), ՄՀ, ՃՁ, ՁԷ (էջ 270), Ո_երորդ (էջ 3), Ժ_ երորդ (էջ 290):

Թվականի գրության այս ձևերով հարուստ է հատկապես III գիրքը:[5] Քիչ չեն համադրությամբ կազմված թվականները՝ ԲԵԵ (էջ 3), ԳՌ, ԸԵ (էջ 119), ՁՌ (էջ 279), ՀՌ (էջ 289), ԼԵՌ (էջ 317), ԲՌ (էջ 323), ՃՌ (էջ 329):[6]

Հանդիպում է նաև գրության խառը ձև՝ ԿԲ հազար (էջ 318):

Մի թվականը գործածվել է և՝ նախադաս, և՝ ետադաս՝ ամ մի (էջ 291, 292), զմի ամ (էջ 321):

Կա օրինակ, որտեղ մի թվականը հանդես է գալիս մին (էջ 91) ձևով:

Երկերիւր թվականը երկու ձևով է հանդիպում, այսպես՝ երկերիւր (էջ 324), հազար երկերիւր (էջ 182), երկերիւր և ութսուն (էջ 328), նաև՝ երկու հարիւր (էջ 284), երկու հարիւր քսան (էջ 284), երկու հարիւր ութսուն և վեց (էջ 330):

Երկում առկա են թվականի՝ գոյականի հետ անհամաձայնության դեպքեր, օրինակ՝ երկու գլխաւորաց (էջ 262), երկու ընկերօք (էջ 280), երեք ասպարիզօք (էջ 285):

Ինչպես հայտնի է, երկու, երեք, չորք թվականները գոյականի հետ թե՝ նախադաս, թե՝ ետադաս դրվելիս հոլովվում են[7]: Վերը նշված օրինակներում նախադաս թվականները չեն հոլովվել:

Մի դեպքում թվականն արտահայտվել է հետևյալ կերպ. երկու ամք պակաս յերից տասներեկաց, որը նշանակում է երեք տասնյակից երկու տարի պակաս, այսինքն՝ քսանութ տարի: «Աղվանից պատմության» III գրքում

---

[5] Տե՛ս Մովսէս Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 291, 292, 344, 345:

[6] Այսպիսի կազմության դեպքում թվականը սկսվում է ոչ թե հազարավորով կամ հարյուրավորով (ինչպես՝ Ց 6000), այլ՝ միավորով (ՁՌ 6000):

[7] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 72:

հանդիպում ենք թվականների միասին և անջատ գրության շփոթություն՝ երեք տասան (էջ 290), չորեք հարիւր (էջ 324), քսաներկու (էջ 314):

Հայերենի հնագույն շրջանում դասական թվականի մասնիկներն են եղել –ր, -որդ մասնիկները: Առաջիններից կազմվել են երկիր, երիր, չորիր ձևերը, մյուսով՝ քառորդ, տասանորդ, հարիւրորդ[8]: Մեր ուսումնասիրության մեջ հանդիպում է այդ մասնիկով հետևյալ օրինակը՝ յերիր աւուր (էջ 38): Որոշ ձեռագրերում գործածված է երրորդ բառը:

Տասանորդ բառի փոխարեն գտնում ենք տասնորդ ձևը (էջ 93):

Առաջին թվականը ինչպես նախադաս, այնպես էլ ետադաս գործածվելիս գերազանցապես հոլովվում է[9]: Կաղանկատվացու երկում մի դեպքում հոլովվում է, մի դեպքում՝ ոչ, օրինակ՝ յառաջնում նուագին (էջ 223), առաջնոց հարցն (էջ 300), բայց՝ յառաջին գործոցն (էջ 19), առաջին մարդոյն (էջ 20, 21), յառաջին պահուն (էջ 222), առաջին մարգարէիցն (էջ 288), առաջին իշխանէն (էջ 326):

Մյուս դասական թվականների դեպքում ևս անհետևողականություն է ցուցաբերվել: Հետևյալ օրինակներում չեն հոլովվել՝ յեւթներորդ շաբաթու (էջ 98), յերկրորդ ամի (էջ 166), երկրորդ պատմութեան (էջ 286):
Այս օրինակներում էլ հոլովվել են՝ յերրորդում գիշերին (էջ 83), ի քսաներորդի ամի (էջ 180), յեօթներորդի ամի (էջ 196), ի չորրորդում պահու (էջ 202) և այլն: Հանդիպում են այսպիսի զուգահեռ ձևեր. ի վաթսուներորդ երկրորդ ամի (էջ 237), ի վաթսուն և երրորդ ամին (էջ 290), կամ՝ յինն և ի տասներորդի ամի (էջ 15), յինն և ի տասաներորդի ամի (էջ 196): Մի դեպքում հեղինակն օգտագործել է տասն արմատը, մյուս դեպքում՝ տասան: Ի նախդիրը կրկնվել է, բացի այդ՝ նախադաս դասական թվականը սովորաբար չի հոլովվում, այստեղ հակառակն է:

Կաղանկատվացու երկին հատուկ է նաև անձնական թվականների ազատ շարադասությունը՝ երկոցունց թագաւորացն (էջ 139), զերկոսին իշխանսն (էջ 153), զերկոսեան նամակսդ (էջ 304), զօրաւարքն երեքին (էջ 164), թավաւորացն երկոցունց (էջ 138), եպիսկոպոսացն երկոցունց (էջ 204), եղբարս երկոսին (էջ 319):

«Աղվանից պատմությունը» զուրկ չէ թվականների մյուս տեսակներից՝ բաշխական (երկու երկու կամ երեք երեք (էջ 160)), բազմապատկական (հարիւրապատիկ (էջ 25), կրկին, երեքկին (էջ109)), կրկնական (երկիցս, երիցս (էջ 16)), հավաքական (երեսնեակ (էջ 105), յիսնեակսն (էջ 224), երրեակ (էջ 178)), բաղկացական (երեսնաւորս, վաթսնաւորս, հարիւրաւորս (էջ 55)):

---

[8] Տե՛ս Հր.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.I, էջ 282:
[9] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 74: